

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ
ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(13.09.2011-08.12.2011)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գումարման տասներորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա նիստ, ինչպես նաև մեկ արտահերտ նիստ ՀՀ կառավարության և մեկ արտահերթ նիստ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 126 հարց, որից 66-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 51-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 4-ը ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 5-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր էին:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 57 հարցով, որից 35-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 14-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 2-ը ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 6-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր էին: Օրակարգը լրացվել է նաև 10 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 183 հարցերից 172-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 55-ը (46-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին. 17-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի, 6-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 3-ը համատեղ նախագծեր էին):

Ամբողջությամբ ընդունված 55 օրենքներից 10-ն ընդունվել են ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2011թ. նոյեմբերի 28-ին գումարված ՀՀ ԱԺ արտահերթ նիստի ժամանակ: Ընդհանուր առմամբ արտահերթ նիստի ընթացքում քննարկվել է 28 օրենսդրական նախաձեռնություն, վավերացվել է մեկ միջազգային պայմանագիր:

Նստարջանի ընթացքում ամբողջությամբ ընդունված 55 օրենքներից 5-ը առանձին կամ փաթեթով քննարկված մայր օրենքներ են՝ որոնցից 4-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, իսկ 1-ը՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախաձեռնություն: Ընդունված օրենքներից 50-ը փոփոխություններ և/կամ լրացումներ են նախատեսում գործող օրենքներում:

Նստաշրջանի ընթացքում՝

- ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացրեց հրաժարականի իր դիմումը:
- Փակ գաղտնի քվեարկությամբ, 102 կողմ ձայներով, ՀՀ ԱԺ նախագահ ընտրվեց Սամվել Նիկոյանը: Քննարկվում էր նաև Լարիսա Ալավերդյանի թեկնածությունը:
- **ԱԺ-ի պատգամավորների նախաձեռնությամբ գումարված արտահերթ նիստի ընթացքում** փակ գաղտնի քվեարկությամբ, 92 կողմ ձայներով, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ ընտրվեց Էդուարդ Շարմազանովը: Քննարկվում էր նաև Արմեն Մարտիրոսյանի թեկնածությունը:
- Դադարեցվել են ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Մելիքյանի լիազորությունները, ում փոխարեն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ԱԺ-ի համամասնական ընտրակարգով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից ԱԺ պատգամավոր է գրանցվել Մուշեղ Պետոյանը:

Ազգային ժողովը նաև՝

- ընտրեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով:
- լսեց ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի գործունեության մասին հաղորդումը
- հաստատեց
 - ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի գործունեության տարեկան ծրագիրը
 - Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2010 թվականի տարեկան հաշվետվությունը
- ընդունեց «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը
- քննարկեց ՀՅԴ խմբակցության հարցապնդումը՝ մերժելով հարցապնդման վերաբերյալ ներկայացված «Հայաստանի Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը

Քննարկվեց նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի գործունեության ծրագիրը, որի քննարկումը սակայն մնաց անավարտ:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեց 15 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության շրջանակներում համագործակցության վերաբերյալ 9 համաձայնագիր, եկամուտների կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ, օդային հաղորդակցությունների մասին պայմանագրեր, ենթակառուցվածքների բարելավմանը միտված վարկային համաձայնագրեր:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց ՀՀ ԱԺ պատգամավորներ Վահան Հովհաննեսյանի, Լիլիթ Գալստյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի, Բագրատ Սարգսյանի, Ռուզաննա Առաքելյանի և Արա Նուսնյանի՝ հեղինակների

կողմից արտահերթ համարված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 15 գրավոր և 38 բանավոր հարցով: «ՀՅԴ» խմբակցությունը 2 հարցապնդմամբ դիմել է ՀՀ կառավարությանը: Հնչել է 85 պատգամավորական հայտարարություն, որոնցից 34-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: